ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

22 մարտի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/1Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 46 անդամ:
Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալը, աշխատակազմի իրավաբանական, կազմակերպական, զարգացման և ներդրումային ծրագրերի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:
Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի մարտի 22-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածը.
1) Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին:
2) Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին:
ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Տիգրան Սարգսյանը:
ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 11 անդամ.
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.
1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
3. Արմեն Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Վազգեն Դարբինյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5.Անահիտ Ասատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6.Արթուր Մանուկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8.Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

9.Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

10.Արմեն Գալջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

11.Արթուր Իսպիրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը, քաղաքապետի տեղակալ Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Տ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանի ելույթի վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացրին Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը և Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյանի ելույթի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել մրցույթ՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Երևան քաղաքի Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին (այսուհետ՝ ավտոկայանատեղի) հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ:

2.Սահմանել, որ մրցույթին իրավունք ունեն մասնակցել այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, ովքեր.

1) անշարժ գույքի հավատարմագրային կառավարման ոլորտում ունեն առնվազն երեք տարվա փորձ.

2) վերջին երեք տարվա ընթացքում ունեն տարեկան միջին հաշվարկային առնվազն 300,000,000.0 (երեք հարյուր միլիոն) դրամի շրջանառություն:

3. Սահմանել մրցույթի հաղթողին որոշելու նպատակով հետևյալ էական պայմանները.

1) Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո հավատարմագրային կառավարչի գործունեությունից առաջին, երկրորդ և երրորդ տարիների ընթացքում առաջացած շահույթից Երևան համայնքի մասնաբաժնի հետևյալ նվազագույն չափերը.

ա. առաջին տարին՝ 77,000,000.0 (յոթանասունյոթ միլիոն) դրամ.

բ. երկրորդ տարին՝ 85,000,000.0 (ութսունհինգ միլիոն) դրամ.

գ. երրորդ տարին՝ 100,000,000.0 (հարյուր միլիոն) դրամ:

2) Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո հավատարմագրային կառավարչի գործունեության չորրորդ և հետագա տարիներին տարեկան շահույթից Երևանի քաղաքապետարանի մասնաբաժնի հետևյալ նվազագույն չափը. ընդհանուր շահույթի առնվազն 50 (հիսուն) տոկոսը, բայց ոչ պակաս, քան 100,000,000.0 (հարյուր միլիոն) դրամ:

4. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի անունից մրցույթում հաղթող ճանաչված հավատարմագրային կառավարչի հետ կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), 10 (տասը) տարի գործողության ժամկետով՝ հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, Պայմանագրում, որպես պայմանագրային պարտավորություն, ներառելով մրցույթի հաղթողի կողմից սույն որոշման 2-րդ կետի համաձայն առաջարկած պայմանները, ինչպես նաև ստորև նշված էական պայմանները.

1) առանց հավատարմագրային կառավարման հիմնադրի գրավոր համաձայնության՝ հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի օտարել, գրավ դնել, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել ավտոկայանատեղին.

2) հավատարմագրային կառավարիչը պարտավոր է ապահովել ավտոկայանատեղիի անխափան և անվտանգ շահագործումը՝ համաձայն օրենսդրությամբ սահմանված նորմերի.

3) հավատարմագրային կառավարիչը պարտավոր է ներդնել ավտոկայանատեղիի մուտքի և ելքի ավտոմատ կառավարման, վճարման և տեսահսկման համակարգեր, արդիականացնել լուսավորության համակարգը, ինչպես նաև կատարել հիմնական վերանորոգման աշխատանքներ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝40 , դեմ՝ 0, ձեռնպահ՝6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ- Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 10 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1.Արսեն Կարապետյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Սիփան Ասատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Արմեն Գալջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4.Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

5.Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6.Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

7.Գայանե Մելքում Մելքումյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

8.Լիլիթ Պիպոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

9.Արթուր Իսպիրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

10.Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը, քաղաքապետի տեղակալներ՝ Հ.Սարգսյանը, Ս.Հարությունյանը, Տ. Վիրաբյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Հասմիկ Խաչունց- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Հայկ Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը և Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը:

Ամփոփիչ ելույթով հանդես Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N 47-Ն որոշմամբ հաստատված.

1) եկամուտների գումարը ավելացնել 116,026.9 հազար դրամով,

2) ծախսերի գումարն ավելացնել 7,286,977.3 հազար դրամով,

3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը ավելացնել 7,170,950.4 հազար դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N 47-Ն որոշմամբ հաստատված NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 40 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝38 , դեմ՝ 0, ձեռնպահ՝2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան